

ԵՐԳԻՆԷ

ՔԱՅՆԵՐԴՈՒԹԻՒՆ ԵՐԵՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՐ
Ե Ի Ր Վ Ա Ն Ջ Ա Մ Դ Է (1)



Առաջին տեսարանը իրաւաբան Ալավէրտեանի գահիճնէ է, ուր հաւաքուած հիւրերը խոսում են որուայ չարիքի մասին, Չարիքն էլ այն է, որ մի ոմն Արաքսեան աստտիկ տանջելով իր կնոջը, նորան հասցրել է ինքնասպանութեան, Ալավէրտեանը, որ գործին լաւ ծանօթ էր, բացատրում է, որ կնոջ տանջանքի պատճառն էր նորա օրինորդ ժամանակ կատարած սխալը: այս պատմութիւնը այնպէս վատ է ազդում նրա կնոջը Եւզինէի վրայ, որ գրեթէ ուշաթափուում է, Հիւրերը ցրուած են. որոնց մէջ, տիկին կալածաբանանը չարամիտ ժպիտով ցոյց է ուզում տալ, թէ Եւզինէի անցեալն էլ անբարտ չի եղել, մինչ այս վերջինը իր ուշաթափուելը վերագրում էր կայծակին, Ալավէրտեանը բացատրութիւն է պահանջում կնոջ տարօրինակ վարմունքի, տխրութեան, կրողմունքի եւ զեղնութեան մասին: կինը լուում է, բայց տանջուում է միաժամանակ եւ ամուսնու հարցերից խուսափում: Այս հանգամանքը տարակուսանքի մէջ է գցում Ալավէրտեանին, բայց իւր կնոջ աստտիկ սիրելուց նա վաճուում է ամէն մի կասկած: Այնուհետեւ Եւզինէի իւր մօր կնոն ունեցած խօսակցութիւններից յայտնի է ինտիմութիւն: որ նա իրան արժան կին է համարում իւր ազնիւ ու մեծաւորի ամուսնուն, նաեւ տանջուում է իւր ալամայ յանցանքի պատճառով: Այս հանգամանքներում անա այնքանութեան է գալիս Եւզինէի մոլորեցնողը ոմն Գաթօ, եւ առաջարկում է նորոգել հին կապերը: Այս առաջարկն արդէն բաժակը լցնում է եւ նա որոշում է բաց անել ամուսնու առաջ եղելութիւնը: Սարսափահար, Ալավէրտեանը թէչ է մտնում ընկել կնոջ վերայ՝ խորտակելու նորան, եւ հաղթ զսպել կարողանալով իրան, սկսում է տանջուել հոգեպէս՝ նա արտանջ ուզում է ներել կնոջը: «Բայց ներել կարելի է երբ կարողանաս մոռանալ այն, — գոչում է Ալավէրտեանի ջոյր Մարթան — իսկ այդպիսի խայտառակութիւն երբէք չի կարելի մոռանել:» Ալավէրտեանն այդտեղ է իրան ոչ էլ կնոջը խայտառակութեան չի՛ զգում, քանի որ դա մանկութեան մի սխալ է եղած լոկ, այն ինչ նրա ջոյրը Մարթան, միակ էլքը ապահարպանն է համարում: — «Ես չեմ կարող ապահարպան պահանջել, քանի որ

ուխտած եմ կնոջս, իսկ իմ անցեալը, մի՞թէ ես անարատ եմ, մի՞թէ զս չեմ խաբել, ինչո՞ւ ուրեմն նա պիտոյ ներէ ինձ, իսկ ես ոչ»: Այս խօսակցութեան պահին ներս է մտնում Եւզինէն եւ յայտարարում է, որ ուզում է հեռանալ մօր մօտ, որպէսզի զէթ՝ որունով ամօքի ամուսնու ցուերը: Ալավէրտեանը չի համաձայնում. նոյն րոպէին մանկանոցից լուում է ցորոցի երբ, Եւզինէն ուզում է հեռանալ բայց չի կարողանում եւ թուլացած ընկնում է վայր: Ուշքի գալով նա իրան գտնում է ամուսնու պրկում, որ ատում է, — «Համազմամբ ներեցի եւ թեղ եւ սիրելով մոռանում եմ անցեալը:» Ապա զանազանով քոլը նա աւելացնում է. «Հար՞մ ես, ես այսպէս եմ ցանկանում, այս է անա կո՛ համոզուեցրո՛ւ: ... Ուրեմն մոռացրի եւ ինձ, պատասխանում է մինչ այն «ազատամիտ հայտեցներէ՛լ տէր» ճանաչուած Մարթան եւ հեռանում: Կըրօք տանք:

Ինչպէս տեսնում էք, պ. Շիրվանզադէն շօշափում է անս իրեւոյթի մի շատ ժամանակակից հարց եւ Ալավէրտեանի բերունով պաշտպան է գուր քալիս մի լուովն մարդասեր եւ ազատամիտ զազափարի: Ալավէրտեանի վարմունքն ու արամաբանութիւնը ինձ թւում է, որ կատարելապէս արձագանք դասն հանդիսականներին մեծամասնութեան սրտում, քանի որ պիտեան մեծ աջողութիւն ունեցաւ. եւ անվերջ ծափերու առիթ տուաւ:

Դա, ինչպէս տեսնում էք, կնոջ իրաւունքները հաւասարման խնդիրն է մարդկանց իրաւունքներին: Այդ հարցն անչառ եւ անմտօթ չէր մարդկութեան. բայց այն ձեւով, ինչպէս մենք տեսանք այս խաղում, կարճիմ մեղանում գեւ ոչ ոք չի շօշափել:

Մենք խնդիրը պարզելու համար ատիպում ենք մի քիչ շեղուել գրական-գեղարուեստական կողմից եւ ուզում ենք քննադատութեան հարցն այս թատերականութեան լոկ զազափարը՝ գիտական եւ ընկերական տեսակետներից, զազափար, որ այնքան թերուղէմ խօսակցութիւնների առիթ տուաւ հասարակութեան մէջ:

Երբ մենք մարդկութեան երկու սեռի հաւաւասարութեան հարցն ենք դնում իրաւունքների մէջ, պէտք է, անտարակոյս, միեւնոյն հարցը դնենք եւ նրանց պարտականութիւնների եւ նրանց էութեան ու կողման մէջ: — Եթէ մենք ուզում ենք խնդիրն լուրջ վերաբերուել պէտք է ուսումնասիրենք թէ ի՞նչ է կինն բոտ էութեան եւ ի՞նչ է տղամարդն ըստ էութեան, եւ ապա միայն, դարերի եւ հազարաւոր դարերի անցած համայնական կազմը ապալելու ջանանք: Մենք պիտի խորամուխ

(1) Այս յօդուածը պիտի առջին ներկայացման առթիւ է գրուած:

լինինք պարզելու եւ հասկնալու թէ մեր պահանջած իրաւունքներու հաւասարութիւնը թղթում է արդեօք իրերի անհրաժեշտութիւնից, մի պարզեք չէ՞ նա արդեօք, մի հոնորութիւն կամ զրկանք չէ՞ մի կամ միւս կողմի համար :

Մենք պէտք է դիմենք բնութեանը, որովհետեւ չկայ մի աւելի անողոք ու անաշտ դատար քան բնութիւնը, իմաստաւ համար թէ ի՞նչ է տուել նա մեզ եւ ի՞նչ կանանց : Այդ ամէնը տեսնելուց եւ ճանչնալուց յետոյ միայն երբ մենք կանգնած ենք բնական, հաստատուն եւ յաւիտենական օրէնքների վրայ, հիմնինք մեր շէնքը, որ Ա.Ետարանի ասածի նման, «ոչ հողմից տասանուէր, ոչ անձերեց փուլ գայ : Էարցն այստեղ բաւական նեղ է գրուած : Երբվազայել չօջախի է միայն խնդրի սեռական մասը, ուստի ս.նք էլ պիտի աշխատինք զորանից շատ չհեռանալ, կարծելոյն չափ կանգնելով գիտական հողին վրայ : Արդ, Դարեւնը, որի հեղինակութիւնը այսպէս խնդրներում վեր է ամէն կապովից, ասում է որ «արուների սեռական ցանկութիւններն, համարիս ըլլող տեսակներում, աւելի զօրեղ, աւելի ուժգին է քան քան էզերինը» : Եւ չմոռցնալ, կանանց աննաատկադատ որ ուսումնասիրողներին մինչը, համաձայնելով Դարեւին՝ նեո՝ պնդում է որ բազմաթիւ կանայք անձեռու են լինում հաստատու անանց համոզման, սա հաստատում է թէ՛ փորձառու տղամարդկանց եւ թէ՛ յայտնի կանանց խոստովանութիւններով : Նա ի միջի է Ար բազմամիւլ վկայութիւնների բերում է Սեբղիի խօսքերը, թէ «կընը ցանկանում է սիրուիլ տղամարդուց, բայց անձնատուր է լինում ինչպէս մի գո՞ւ . ես ճանաչում եմ շատերին որոնք զգուս են կուպակցութիւնից, թիւս պաշտում են իրանց ամուսիններին, ճանաչում եմ օրիորդներին, որոնք բախտ եւ ուրախութիւն էին որոնում ամուսնութեան մէջ, բայց որոնք միայն ձանձրոյթ գտան այնտեղ . . . »

Մըլչին ասում է որ «չիմար են, որոնք կտրծու են կն ինն անձնատուր է լինում ֆիզիքական սիրուց զրուսած : Փորձառու մարդկանց շատ լուս յայտնի է, որ կնոջ յարթելու ստաջիկն պայմանն է հաճոյակատարութիւնն ու բարութիւնը : »

Մարդը իրենք է նպատակ չէ կնոջ համար, այլ միջոց . կնոջ նպատակն է զաւարը : սա այնքան զեղջեղի կերպով արտայտուած է Աստուածճիւղուչի մէջ, ուր անգլաակ էաբեւը գտում է Յակոբ նահապետի երեսին . «Սուր ինձ մի որդի, թէ չէ ես կը մեռնիմ» : «Մարդը կնոջ համար մի հովանաւոր է լոկ եւ իւր զա-

ւակների հայրը», ասում է Լօբբրօզն :
Սեռական նուազ համոզքն է պատճառ որ շատ օրիորդներ մի անգամ սխալելուց յետոյ, հրասթափ երեւակայած պատարանքից, զաղարում սայնուհետեւ մտութիւնը :

Այդ ամենի հետ, կնոջ հողքն մէջ կան զրծեր, որ տղամարդու համար միանգամայն անհասկնալի են, ինչպէս օրինակ «կուտութեան զգացումը», Դա կնոջ համար թաղ ու պարծանք է, եւ այնքան խոր ու արմատական է այդ զգացումը, որ շատեր, ամուսնացած օրիորդներ, հրածարում են առգագատից իրանց սեփական ամուսինների հետ : Բոլոր ամուսնացած կանայք կարող են հաստատել, որ կանանց մտմամբութիւնն էլ երկրը ժամանակ իրանց ամուսիններին չեն կարողանում ներել այն որ նոքա ամուսնու ձեռքով զրկուել են այնպիսի մի թանկագին գանձից, ինչպիսին է կուտութիւնը : Միայն տարիներն ու զաւակներն են, որ մտանալ են տալիս կնոջ իւր անգնահատելի կրօնատը : Այդ է անա պատճառը, որ բոլոր կուտուրակայն լեզուները երկու բառ ունին ամուսնացած եւ ամուրի կանանց համար : զորքաց իրանց զգացումներով եւ լեւթեամբ միանգամայն տարբեր էակներն են : նորանցից մի «օրիորդ» է իսկ միւսը «կին» : Ո՛չ մի կուտուրակայն լեզու այսպիսի տարբեր բառեր չունի ամուրի եւ ամուսնացած տղամարդու համար :

Այդ ամենը կարծես չեշտելու եւ երկու սեռերի մէջ եղած խաճախը հաստատու եւ անխոստափելի անելու համար, բնութիւնը մի ֆիզիքական պատուար է դրել որ միւս կողմը յղութեան ուրուականն է կանգնած իր սարսափներով : Այն բոլորը միական համախորուած են պաշտպանելու մի թոյլ էակի անարատութիւնը՝ գրեթէ մի անտիկ բերդի նման . . .

Այդպէս է արդեօք ինքը, տղամարդը :
Նրան միանգամայն խորթ ու անձանթ են այն ամենը, ինչ որ տեսանք կնոջ հողու եւ մարմնի մէջ, կուսական անարատութեան զգացման հետքն անգամ չկայ տղամարդու մէջ, որին ընդհակառակը, բնութիւնը պարզուել է մի սաք ու կրթող խոսնուածք, նախաձեռնութեան ոգի է վազլուուն եւ անզուսպ սեռական ցանկութիւն եւ շոքն վաւաշտ համոզք, Դարեւին կարծիքը այսպիսի խնդրներում գրեթէ օրէնքի նախակութիւն ունի . «արուս եւ միշտ, ասում է նա, որ արունս է եղին» . եւ ինկատի ունեցէ՛ք, այդ ուժգին կրթն ու բուռն ցանկութիւնը բնութեան կողմից չեն սահմանափակուած ո՛չ մի պատ-

ւարով, ո՛րք ֆիզիքական նեղութիւն եւ տանջանք, ո՛չ յղուծեան ասրսափ, ո՛չ զաւակնեւրի հոգս եւ ո՛րք նոյն իսկ մի մեծ բարոյական զրկանք . . .

Այսպէս ուրեմն, ինքը, բնութիւնը մի մեծ խրամատ է գրեթէ մեր երազած հասասարութեան մէջ : Կտո՞ջ ցանկութիւնները նուազ են, կիրաքը սանձանախակ, սեռական զրգոխն ու հաճոյքը չափաւոր, օժտուած կուսական զգացումով հոգեպէս, եւ եպանոյժուած ֆիզիքապէս . — այնինչ Եղամարդուներ ամէն բանով բուռն, զօրեղ, իբրդանց, անզուսպ առանց որ եւ է բարոյական կամ ֆիզիքական խոշոր պատահանատութեան ու կորուստի :

Ո՛վ ուրեմն այս երկու արարածներէց ընդունակ է համբողջ ու ժողովակ լինելու . . . եւ եթէ մենք բաց ինչ անուժ համբունութեան ու զգաստութեան սանձանները երկուսի առաջ հաւասարապէս, մի անարգարութիւն չէ՞ զանորիցք բնութեան օրէնքներ ի կամ հէնց հաւասարութեան դէմ, որպէս սկզբունք : այնպէս որ մեր կրթութեան ու զբաղմունքը Ալլա վերտեաներ ու մասնագէտ էր մարդկային օրէնքներ, ո՛ր եւ ճարտար իրաւաբան՝ բնութեան օրէնքներին եւ իրաւունքներին, որոնք յաւերժանական են եւ անխախտելի, միանգամայն անտեղեակ է եւ եւուժ :

Բայց կարելի էր առարկել, որ մարդասիրութիւնն ու ներքին ճանքը մեղ զրգում են իսկ ուչարդութեան չառնել բնութեան բիրտ ու կոպտ օրէնքները, իսկ մեր ներքին ճանքը չի կարող չհամաձայնիլ Ալլա վերտեանի հետ, որո՞ մտածողութեամբ ներում է իր մտածման յանցանքը : Մեր զարու լայն ու մարդասէր յանրանքները չեն կարող թոյլ տալ որ մարդը վայելի մտէն տեսակ ազատութիւն, իսկ կինը ճշուտ ու փակուած մտայն հարեմական կանգնեցնելու տակ : Իսկ դէմ է արդարութեան եւ հասասարութեան ամենատարրական հասկացողութեան, որ եւրոպական լուսաւորութիւնը մտցրել է մեր մէջ :

Ալլավերտեանի խիզճն ու բանականութիւնը պահանջում էին որ նա սուս ու փութ լուէ, ու ներքէ . այն պատճառով, որ ինքն էլ անարատ մէկը չէ եղել : «Նս հասասարութեան երկրպագու եմ, մտածում է նա կինս յանցանք եւ սխալ է գործել, բայց դէ՞ ես էլ մի բարձր պտուղ չեմ եղել : հետեւաբար մենք իրենք ենք . — ըստ անձախ՝ այժը կտակէն դուրս : »

Սոս գաղափարը կոյ՞ օգի, մամուլի եւ քիչ թէ շատ կրթութեամբ հասարակութեան մէջ, բայց եւ այնպէս, ամէն մարդ, ինչն իրան, իր արջ խորքում մի քիչ այլ կերպ է մտածում : Հեշտ է, ինքնիք է, թատրոնում ոգեւորութիւլ ու՝ ծնւ-

փանարել ներքու եւ ազատամիտ հերոսին, բայց սոյն «բարձան» ունենալ իւր սեփական տանը, տեսնել իւր մօրը, կնոջը, հարսին եւ կամ քրոջը Եւգինէի դերում, կարծեմ մեզանից ոչ զք չէր ցանկանայ :

Ի՞նչ է պատճառ, միթէ մեր խելքն ու բանականութիւնը, մեր խիզճն ու համոզումները, մեր ուսումն ու կրթութիւնը բաւական չեն ինչդերու մեր մէջ զազանք եւ թօթափելու զարերով խտացած բնազդը . . . եւ եթէ կոյ մի այդպիսի կոխ կամ տարակուսանք, չունի՞ զա արդեօք մի խոր, ընկերական-բարոյական հիմունք, որը մենք չենք կարող ճնել հակառակ մեր բոլոր ճիշտ շահքերին : Չունի՞նք արդեօք Ալլավերտեանի հոգեկան տանջանքները խոր բարոյական նպատակաւ : Մի պատրաստ չէ՞ արդեօք, որ այդ ամենը մենք վերաբրում ենք զազանք չար բնազդին, որ թղխում է կոյր նախանձից եւ սնունդ առնում արուի խանդոր հոգեւորում . . .

Կան գուցէ մեր դիտակցութեան մէջ աղօսմանցած կաշծեր, որոնց զոյուծիւնը մենք ուրան սլ չենք կարող հակառակ մեր բոլոր համոզումներին :

Արք, ընդհեյք ու վերուժենք Ալլավերտեանի արամբանութիւնը, եւ տեսնեք, համապատասխանում է զա, որա զուսանած հակասարութեան եւ մարդասիրութեան սկզբունքներին :

«Նս կնոջս ներում եմ» . ինչո՞ւ, որովհետեւ ես ինքս արատաւոր եմ, — այն՝ ինչ որ ինձ ներելի է, ներելի է ե՛ւ նորան, քանի որ մենք հասարակ ենք : »

Շարունակենք այս արամբանութիւնը . — «ես արատաւոր եմ, հետեւաբար կինս էլ կարող է արատաւոր լինել : ես աւազակ եմ, իրաւունք եմ տալիս նոյնը լինելու ե՛ւ կնոջս : անառակ եմ, թող կինս էլ անառակ լինի, հրէշ եմ, կարող է կինս էլ հրէշ դառնալ . . . »

Այստեղ անմիջապէս յատալ է զալիս մի հարց, ես իրաւունք ունի՞մ արդեօք «արատաւոր», «կեղտոտ», «հրէշ», «հրէշ» լինելու . — ո՛չ : — Ինչպէ՞ս հապա իմ չունեցածք ես իրաւունք եմ համարում տալու ուրիշին : Սա մի ակնհեւրեւ անխմատութիւն է, Եւ ի՞նչ է իմ տուածն ըստ հեւթեան . իմ արատը, իմ կեղտը եւ իմ անառակութիւնը, Ես ստոր եմ եղել, ես թեւրացել եմ վարք ու բարքի մէջ եւ եւ թոյլ եմ տալիս նոյն թերութիւններն իմ կնոջը . ես հաւասարեցնում եմ նրան իմ արտի, կեղտի, թերութեան եւ այ՛ն ամենի հետ, որա ինքս իրրեւ բարոյական մարդ իրաւունք չունիմ անելու : Պարզ ի պարզոյ ես նորան տալիս եմ

անբարոյականութիւն, իմ առածը մի գրական արժանիք չէ՛, այլ բացասական կողմը, Հետո՛ւ ւարար այստեղ իրաւունքի մասին խօսք անգամ լինել չի՛ կարող, ա՛յն ինչ որ արդիւնք է մեր թուլութեան ու մեղիութեան տալիս ենք վայելելու մեր կնոջը, Բարձրացում, զարգացում չէ՛ զա կնոջ համար այլ մի կատարելանելու մ :

Կը ներէ՞ր արդեօք Ալալէրտեանը, եթէ ինքն անարատ լինէր, եթէ նա իր մարմնի եւ հոգու բոլոր գանձերը պահած լինէր մի անարատ ընտանիք կազմելու համար : Այն ինչ որ նա է տրամաբանում, մի կատարելա ծաղր է հասարակութեան համար, «Նա մնալուտ եւ եղիշ կարող էր կրնա էլ նոյնը լինել» : — Կրնա ուրեմն արդարանում է իմ մեղքով : Ուրիշ խօսքով, մենք ներում ենք ո՞ր թէ մեր կնոջը, այլ մեզ միայն : Նորա անցանքը ես ծածկում եմ ի մինով, ներում եմ նորան, որովհետեւ ինչն ինձ վերեօք եմ... այս ամենը ինչպէս տեսնում էք բարում է մի կատարելա մեղկութիւն, մի ստոր եսամոլութիւն, եւ մի շնական ծաղր... Հերիք չէ որ ես յանցաւոր եմ, ես համարձակում եմ «Իրեղևու» նաեւ ուրիշին եւ այդ ուրիշը գեո Ա՛ յաճի էլ պարտք է մոռում ինձն, եւ այս ամենը ես ծախում եմ հասարակութեան, վեհանձնութեան եւ մարդասիրութեան անուանելով... :

Սա ինչպէս տեսնում էք, մի շատ ձեռնտու առևտուր է տղամարդու համար. «Նա չնվ կուրող ինչ չափ մարտ շինելը բայց քոյը եմ չաչխա մինչեւ անցում մեծահոգութեանը ներում եմ, որ դուք ինձ չափ կեղտո շինես» :

Ամէն մի անարատ կին պիտի ստակար այս քարոզիքը եւ պիտի բողոքէր մի այդպիսի բարոյականութեան դէմ, որը նորան ուղղակի դէպ ի անկումն է տանում : Իրեւ շարժալի գիտող, պէ՛րիվանդադէի արջիք չէ՛ վրիպել մաքուր կնոջ այդ զգացումը : Երբ Ալալէրտեան «մեծահոգութեամբ ներում է իր կնոջը», նորա քոյը Մարթան, որ մինչ այդ տան «զապատիրա եւ լայն հայեացքներ տէր մի կին» էր, հեռանում է եզբօր տանից, ասելով. «Մոռանում ես կնոջ յանցանքը, մոռացիր ես ինձ» : Բայց այն արդարացի, հոգեբանութեան միջնամասն ճիշդ, հետեւաբար եւ բարձր գեղարուեստական գիշը պիտեայի մէջ ծաղրում է տաղանդաւոր կերպով, որովհետեւ դա հեղինակն հմնական հայեացքն հակասակ է, ուստի իբրեւ Ալալէրտեանը բարձր բարոյականութեան մի ոգորմունք կոնարտու ներկայացուած է, այնպէս որ ամբողջ հասարակութեան ծիծաղն է շարժում արթան չէր կարողանում փաստարանել եւ

պագացանն էլ, բայց նա իր հոգու անարատութեամբ շատ անկի խոր եւ շատ անկի հեռուն էր անհուն ջան իւր եղաւայրը : Իրեւ մաքուր կին, նա ամբողջ էութեամբ զգում էր, որ այդ ներումը եթէ համայնական բնութիւն ընդունէ, պիտի կնոջ ամենապարան իրաւունքներն է՛րբ փորձ, լայն ճանապարհ բանալով Գարօների առջեւ. տուժող այդպիսի շէպքերում պիտի լինեն միմիայն ամենապարան անհասանելիքը : Ինքը, ապտամիւս, կրթուած եւ լայն հայեացքներ տէր Մարթան, շատ լաւ էր զգում, որ զա իրաւունք չէ, այլ պարտագնալիւն, մինչ նորա իրաւարան եւ այսպիսի հարցերում իրաւադէտ եղաւայրը դուրս գալիս է ոչ միայն տղէտ, այլ գրեթէ անբարոյական մէկը, որ իր պարտագնալութիւնը ուրիշին տալիս է իբրեւ իրաւունք : — Այլ կերպ պիտի զգար ու մտածէր մեր վեհանձն պարօնը եթէ ինքն էլ Մարթայի նման անարատ եւ անմեղ լինէր... :

Պ. Երիվանդադէն հարցն այստեղ բաւական նեղ է դրել : Ես վերջցել է կնոջ սխալ նորա ամուսնութենից քանակ որ, ինձ թուում է, բաւական հաղորդէ պրեւոյթ է մեզանում : Բայց հազապէս չէ, մինչեւ անգամ շատ յաճախապէս է կնոջ սխալը եւ ամուսնութեան մէջ... :

Որու հեղինակ Ն. Գանչնկօ, այդպէս էլ զընում է հարցը իր պեհալքի արժեքը՝ պիտեայում, ուր հերտուհի տիկինը տանք որ եւ է հիմնական պատճառները դաւանանում է ամուսնուն, սիրականը ինքնասպան է լինում եւ ամուսնին ներում է յանցաւոր կնոջը, վատնալով որ նա էլ կարող է անձնասպանութիւն գործել, —

Ինձ թուում է, որ պ. Երիվանդադէն այս խաղը գրել է օրու կեանքի եւ գրականութեան ազդեցութեան տակ, ուր, պէտք է ասած, ամենալայն եւ համբերող հայեացքներ են տիրում այսպիսի հարցերի վերաբերեալ : Այլ կերպ է նայում այդ հարցին ժամանակակից դրամատուրգներից մէկը, Ջուդիթման, ա՛յն յարեմի տան մէջ (Hesonal) ծերունի զինուորական հարցափորձի է նմանալում իր դուստր Մարտային եւ մինչնայն ժամանակ պատրաստում է սպանել իրան կամ գտեր, ասկայն երբ իմանում է նորա արատար լինելը, կրթուած արքա մեռնում է : Ի նկատու ընեցեք, որ սա մի հայր է եւ ոչ մի ամուսին, եւ չի կարողանում ներել մի աղջկայ, որը ներուելու բոլոր հանգամանքներն ունէր, նա մի գերասանուհի էր, իւր հայեացքներով մի ազատ թոշու... :

Միայն գրականութիւնն ու մամուլը չէ, որ գրադուռէ մ այս հարցով: Գրա վրայ երկար ժամանակ գլուխ են ջարդել նաեւ օրէնսդիրներն ու կառավարութիւնները:

Ճիշդ Շիրվանզագէի հաւասարութեան գաղափարից դրողն է, ի նկատի ունենալով մանաւանդ անմեղ մանուկներէ վիճակը, Գերմանիայում մի 10-15 տարի սրանից առաջ մի օրէնք հրատարակեցին, որով ապօրինի դուստրուստի հայրերը պարտաւորուէին հողալու իրենց որդոց ապրուստը, Մակայն, այդ մարդասէր օրէնքը մի զարմանալի հետեւանք ունեցաւ: Գրա հրատարակումից յետոյ ապօրինի ծնունդներէ թիւը գարմանով կերպով սկսեց աճել: Մինչ այն ժուժկալ ու համեստ Գերմանուհիք սկսեցին իրանց վրէժն առնել տղամարդկանցից՝ բեռցներով նրանց վղին բազմաթիւ երեխաներ, որոնց կերակրել էր հարկաւոր:

Հաւասարական այդ դառն փորձից յետոյ, օրէնքն ստիպուած էին փոխելու...

Արդ, պ. Շիրվանզագէի գեղեցիկ ու մարդասիրական թատերգութիւնից յետոյ, որին ա՛յնպիսի ջերմութեամբ ծափահարեցինք ամենքս, պատրաստ ենք արդեօք ընդունելու եւ այն սերւրպիթիզները, որ Գերմանուհիներէ նման հայ օրիորդներն էլ պիտի ցանկային անել իրանց սիրականներին...

Մենք հարցը քննեցինք, առաջին՝ բնագրական տեսակէտով, եւ գտանք, որ այս խնդրում կհնոջ եւ մարդու հաւասարութեան մասին խօսք լինել չի կարող: Երկրորդ՝ նոյն հարցը մենք քննեցինք բարոյական տեսակէտից՝ եւ տեսանք, որ Ալավերտեանի տուածը իւր կհնոջ իւր իրաւունքները չեն այլ իւր պարտաւորութիւններուն ու ցոփաբարձներ, եւ այստեղ իրաւունքի կամ արդարութեան մասին խօսք անգամ չի կարող լինել: Երրորդ՝ խնդիրը նկատեցինք իր հետեւանքների գործնական տեսակէտովն

եւ գտանք, որ՝ դա լինովին վտանգաւոր է: Ուրիմն եղբայրացութիւն, — խաղի հիմնական միտքը ոչ միայն սխալ, այլ եւ վտանգաւոր է ամէն տեսակէտով: — Վերցնելով մի քանցառիկ երեւոյթ, հեղինակը մեզ ժի բարոյականութիւն է քարոզում, որ արդիւնք է թերիմացութեան եւ իրան հետ միասին մեզ էլ այն համոզումն է ներշնչում, թէ Ալավերտեանի կատարածը մի օրինակիլի եւ վեհանձն գործ էր: Այս սխալը ինչպէս տեսանք միայն պ. Շիրվանզագէից չէ, այդ սխալը կատարել են շատ մեծ ու փոքր եւրոպական հեղինակներ. կատարել է, ինչպէս տեսանք, եւ գերմանական Բայնաուսալը, ուր Բիտմարկի նման դուռիներ էին խշխում:

ԳՐԻԳՈՐ ՎԱՆՏԵԱՆ

ԹԻՖԼԻՍ

Յ. Գ. Այս թատերգութեան գեղարուեստական մասին մենք չենք խօսում. նրա առաւելութիւններն ու այնքան շատ են, որ պակասութիւններն ու թերութիւնները կարելի է միանգամայն անտես առնել: Հեղինակը մշակում է իր գործը՝ երկրորդ ներկայացման համար, որից յետոյ, եթէ ուրիշները մեզ չկանխեն, դուցէ կարողանանք մեր համեստ նըկատողութիւններն անել: Խաղի աջողութեան ամենաեռանդուն ծափահարողներից մինն էինք մենք, տեսնելով մեր առաջին վիպասանին մէջ եւ առաջնակարգ թատերգակի շնորհք: Թատրոնից մենք հեռացանք այն հանելի գիտակցութեամբ, որ Սոււնդուկեանի տեղը թափուր չի մնալու այսուհետեւ:

Գ. Վ.